

1. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում Բանկը կարող է պահանջել վարկի գումարի և հասանելիք տոկոսների վաղաժամկետ մարում:
2. Տուժանքի դեպքում վարկառուն պարտավորվում է վճարել 4-րդ կետով սահմանված չափի տուժանք՝ հաշվարկված չկատարված դրամային պարտավորությունների նկատմամբ:
3. Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունների մարումը կարող է իրականացվել վարկառուի այլ գույքի հաշվին:
4. Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տուժանք 0.13%-ի չափով:
5. Տուժանքի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է տուժանք, պայմանագրով սահմանված տոկոսների հաշվարկը դադարում է:
6. Բանկի կողմից կարող է վարկառուի գրավադրված գույքը վարկառուի կողմից վարկի մարումները ուշացնելու կամ վարկը չմարելու պատճառով առգրավվել դատական կամ արտադատական կարգով:
7. Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում հաճախորդի մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում: